Թէ ո՛չ Դուստր վերին Սիոնի, Տաճարն ասեմ Միածնի,
Փութալ խոնարհ ի դէմս զուարթս յԱջոյ համբոյր Հովուիդ քաջ,
Շնորհաւորել ի պատկառանս զտօն որբոյն Գէորգեայ,
Գործք սիրոյդիք և բազմարդիւնք Հայրապետիդ վեհապանծ,
Սուրբ ճակատիդ հիւսեն զպսակս յայսմ տօնիս զգերազանց,
Զորս ընդ Դաւթի հաչակեսցուք և մեք ազատ ի Մուսայս,
Ընդ ազգիս համայն զովեսցուք յար զՀայրենեացս ժիր Պաշտպանդ,
Այո՛ յաւէտ քաղցրանուագ երգեսցուք մեք ի կիթառ,
Զ Հայրդ ասեմ զՏէր Գէորգ, զարի Հովիւ մեր Հօտին,
Զամուր վահանդ Եկեղեցւոյս՝ զարժանընտիր մեր Գլուխ,
Եւ յարձագանս մեզ փութասցին սրտաձմլիկ մեր աւերք,
Վիշտք, տառապանք ի մոռացօնս, յայսմ հեռէ, Վեհափա՛ռ,
Զեօք շողաց փայլ ի փայլ դրօշակ բոցալուսոյն վառ ի վառ,
Զեօք փիթեցան ծիլք զիտութեան, և վանեսցի հեռ, նախանձ,
Զեօք ծաղկեցան և ծաղկեսցին մեր բուրաստանք կոչտ մտաց,
Փութա՛, ուրեմն, յարատեւեա՛ց Տէրանէ, Հա՛յր, օր քան զօր,
Օ՛ն կատարել քաջալերեա՛ց սիրագործ զջանս բեղմնաւոր,
Յօգուտ ի փառս Թշուառ մանկանց Հայաստանի սիրելի,
Որք ի վաղուց ի խոր խաւար տգիտութեան խարխափին,
Ուստի և մեք համախմբեալքս զծղիս ի վեր համբարձեալ,
Աղօթեսցո՛ւք միշտ առ Աստուած՝ տալ կեանս Վեհիդ պերճացեալ,
Զի Դու, Հա՛յր սուրբ, զարդարեսցես զմեր սուրբ Մայր փառաւոր,
Յայնժամ՝ այո՛, սրբեսցին աչք յարտասուաց դառն վշտահար։

Դպ. Բշլակ Պալասանեան. ա-
շակերտ ժառանգ. ուսումնարանի
Մայր Աթոռոյ.

յ30ն Սեպտեմբերի
1872 մ.

ՅԵԿԱՏԱՐԻՆԱՏԱՐԻ.

Լիմբասրոնեան Արտաքին պաշտօնական ամառանոցէն.

Համաձայն սրբազանեալ փափագանաց Նորին Վեհափառութեան Տեառն և Տեառն Գէորգայ Դի Սրբազնակատար Մեծ Հայրապետին մերոյ և կարգադրութեան Հոգաբարձական վարչութեան Ծ. Հ. Մեսրոպեան երկսեռ դպրոցի տեղւոյս, սկիզբն արարեալ ի 15ն Յունիսի ներկայ տարւոյս՝ աւարտեաց ի 23ն նոյն ամսոյ, փոյթեռանդն պարապմամբ հարցաքննութեան ի ներկայութեան հանդիսականաց ոմանց նշանաւորաց, յիւրաքանչիւրում աւուր միոյ կամ երկուց առարկայից ուսմանց նախապատրաստական Առաջին և Երկրորդ դասատանց. և զգտնեալ յառաջադէմ զաշակերտսն ի նախապատրաստական դասատան թուով 5, վերածեաց յԱռաջնում դասատուն, և աշակերտք երկուք, յառաջնում դասատանէ յերկրորդ դասատուն, և աշակերտք երեք՝ զետեղեցան յերկրորդ դասատանէ յերրորդ դասատուն։

Նոյնպէս և զընտրեալսն յՕրիորդաց վերածեցան թուով 7 ի նախապատրաստական դասարանէ յառաջնում դասատան, և օրիորդք ութն զետեղեցան յառաջնում դասատանէ յերկրորդ դասատան. զորոց Հոգաբարձութիւնս խնդրէ խոնարհաբար հրատարակել միջոցաւ յէջս Ազգաշահ Ամսագրոյդ, ի լուր և ի բերկրանս բարենախանձ մերազնեայց։

Արդ՝ մնալով ակնկալու կատարման խնդրանաց մերոց եմք և մնամք յաւէտ բարեացապարտք և բարեմաղթութք ազգապարծան ձեռնարկութեանց Միաբանական Խմբագրութեան Լուսակերտ Մեծի Ս. Աթոռոյդ։

Հոգեբոյս
Յովհաննէս Թոմանեան.
Գէորգ Երզնկեան.

Ի 15 Սեպտեմ. 1872 մ.
Յերուսաղեմ։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ ԲԻԶԱՆԴԵԱՆ.

Պօղոս Արքեպիսկոպոս։ — Ուսումնարանք եւ դաստիարակութիւն։— Պրուսա։ — Պ. Ոստանիկ։ — Սքանչելիք։ — Հաշիւներ։ — Եպիսկոպոսէն։ — Հռոմ. ազատ Ազգայինք։ — Մալաթիա։ — Նեղումն ի Տէր Գէորգ Ս. Եպիսկոպոսի։ —

Ց 9ն Սեպտ. ամսոյ ի գիշերին՝ Հայաստանեայց Եկեղեցին զրկեցաւ մի Նշանաւոր և տաղանդաւոր հոգևորական պաշտօնեայէն՝ որ էր ի հասակի 75 ամաց։

Այս անձն է Պրուսացի Թարթարեան Գեր. Պօղոս Ս. Արքեպիսկոպոս՝ Զմիւռնիոյ երեսուն և հինգամեայ Առաջնորդն, որ երբեմն Կ. Պոլսոյ պատրիարքը ալ եղաւ, և որ լուսահոգի Աղաւնի Ստեփան Պրուսացի պատրիարքի օրով պատրիարքական — Փոխանորդ եղած է, և որ Պրուսայու և Նիկոմիդիոյ առաջնորդին և Արմաշու վանից հիմնադիր խստակրօն և մեծագործ Կեսարացի Պօղոս Ս. Արքեպիսկոպոսի աշակերտներէն է, և Արմաշու միաբան գոլով՝ երբեմն մեծաջան աշխատակից և նախանձախնդիր փայած է նորին (Արմաշու Զարխափան Ս. Աստուածածին վանուց) պայծառութեան և ուսումնարանի կառուցման։

Հանգուցեալն՝ հմուտ և ուսումնական, կրօնից նախանձախնդիր, աւանդութեանց՝ օրինաց և կարգաց պաշտպան, ուշիմ՝, բազմափորձ, հեռատես, միանգամայն բարեբարոյ և պարկեշտ եկեղեցական էր, և դեռ Զմիւռնիոյ Առաջնորդ չկարգուած՝ ունեցած ասպարէզներուն մէջ բաւական մեծ դերեր ունեցած է։ Սակայն քանի տարիքն առած է՝ կարծես մի յուսահատութիւն տիրած էր վրան, և այնուհետև մանաւանդ վերջին տարիներս անտարբեր դրից վիճակեցաւ և աւելի ոչ ինչ գրեթէ չգործեց՝ զգոյշ մնալով այլոց բամբասանաց տեղիք տալէն, թէ և անբասիր ևս երբէք չկարաց մնալ։

Հանգուցեալն 15 օրուան չափ անկողնոյ ծառայեց, և արդէն մի քանի ամիս յառաջ պատրաստած էր կտակ, յորում՝ նշանաւոր է Զմիւռնիոյ Ազգ. Հիւանդանոցին 500 օսմ. ոսկի նուիրելն. ինչպէս նաև քահանայից 20 ոսկի՝ անոր տոկոսով ամեն տարի իւր հոգւոյն համար պաշտօն և պատարագ մատուցանելու, և 20 ոսկի ալ Աղքատասիրաց Ընկերութեան կտակած է, և կտակատար կարգած է իւր Մեծ. Եղբայրը։

Մնացեալքն անկարևորք են։

*
* *

Կ. Պոլսոյ, և արուարձանաց, նոյնպէս և համայն գաւառներու մերազնեայց ազգ. կրկին սեռի ուսումնարանք ըստ մեծի մասին անորոշ՝ անտարբեր և անօգուտ դրութեանց ենթարկեալ են, թէ և շատ տեղեր դեռ ևս (մանաւանդ վանօրէից մեծագոյն մասին մէջ դպրոցք և) ուսումնարանք չկան։

Դաստիարակութիւնն և բարւոք ուսումն միայն կրնան մեր ապագայ կենաց փրկութիւն, աննսեմ փառք և պայծառութիւն տալ. ուրեմն կՀետևի՝ թէ առանց ազգային ուսման և օգտակար դաստիարակութեան՝ չիք մեզ ապագայ կեանք, և թէ այժմէն պէտք է յուսահատութիւնք որ և իցէ յառաջադիմական և վերականգնման ակնկալութիւններէ։

Ուստի ցաւալի է մեր վիճակ։ Թէ և կան սակաւաթիւ ուսումնարանք և մասնաւոր անձինք որ մխիթարական և արդիւնաւէտ վիճակի մէջ են, սակայն համեմատութեամբ քանակութեան դպրոցաց մերազնեայց կողմանց՝ զանոնք աննշան կամ յոյժ նուազ պիտի համարիմք։

Այժմ՝ կմնայ մեզ յուսալ տեղւոյս ներկայ Կրօն. և Քաղ. ժողովներէն, զի Խառն ժողով կազմեն և միշտ միաբանութեամբ ջանան և գործադրեն սոյն այս ազգ. կենսական խնդրոյ պ-ր-ա-ա-ր-է-ն դ-ր-ա-Ն-ե-ա-ք ընդհանուր տարածումատալ կանոնաւոր հրահանգներով և հաստատուն միջոցներով համայն Տաճկաստ. մերազնէից մէջ, և ինչպէս նորերս Վանօրէից խորհրդոյ առաջարկութեամբ հետևեալ 17 վանօրէից մէջ դպրանոց բանալու հրահանգներ ղրկել որոշեց։

1) Կեսարիոյ Ս. Կարապետ. 2) Գաղատիոյ Ս. Աստուածածին. 3) Սեբաստիոյ Ս. Նշան. 4) Մարզուանու Ս. Աստուածածին. 5) Պայազիտու Ս. Յովհաննէս. 6) Արղնու Ս. Աստուածածին. 7) Մշոյ Ս. Առաքելոց. 8) Վանայ Ս. քանչելագործ. 9) Աղթամարայ Ս. Խաչ. 10) Եւդոկիոյ Ս. Յովհան. 11) Տիվրիկի Ս. Լուսաւորիչ. 12) Մանճիլլեխայ վանք 13) Խարբերդու գուլէ վանք. 14) Երզնկայու Ս. Ներսէս. 15) Շապինղարահիսարի կամ Թամլարայի վանք. 16) Կարնոյ վանօրէից մին. 7) Աղբատու Ս. Բարդող առաքեալ։

Կսպասեմք սոցա և այլոց տեղեաց համար գործադրութիւնքը տեսնել և արդիւնքները վայելել։

Դեռ կդրեմ։

*
* *

Պրուսայու վիճակը խաղաղելոյ վերայ է, և արդէն խրկուած քննիչք յաջողած են Սահմանադրութեամբ Երեսփ. ժողով կազմել տալ, և հետևանքը կլինի առաջնորդական խնդրոյն լուծումը, և որ Գեր. Բարթուղիմէոս եպիսկոպոսին համար յոյժ նպաստաւոր և բարկացող է։

*
* *

Բաւական ուրախութեամբ և մխիթարութեամբ կրպարարէ մեր օրտերը Վանեցի Պ. Ոստանիկ տէր Մարգարեանց երիտասարդի համբաւն, որ Գաղղիոյ առաջին կարգի Համալսարանի միոյն մէջ՝ 200 աշակերտներէն յառաջ ճեպելով՝ իւր ուսմունքն աւարտելով վերջին մրցանաց մէջ բոլորին գերազանցելով յաջողեցաւ ոսկեղէն նշան՝ մետալ՝ և Ե-ք-ր-ա-գ-ի-ն Ֆ-ա-ր-ա-ա-ի-ի առաջին տիտղոսը առաջին անգամ ժառանգել, որ Հայոց ազգին ալ փառքը կյաւելու և երիտասարդաց նախանձելի օրինակ կրնայ լինել։

Նոյն երիտասարդը ոչ միայն Գաղղիոյ Հանրապետութեան Նախագահ Պ. Թիէրի համակրութեանց և գովեստից արժանացած է, այլ և Գաղղիոյ և Անգղիոյ լրագրաց մէջ մեծ գովեստից էջեր գրաւած է։

Սա իւր ուսումը աւարտած է Հայկազն և Աղգասէր Վսեմ. Նուպար փաշայի ծախիւք և խնամօք, որ Եգիպտոսի արտաքին գործոց պաշտօնեայ է։

Նոյն Պ. Տէր Մարգարեանց երիտասարդը ումն հարիւր ֆրանգ՝ կէսը Վանայ Ս. Սանդխտեան և կէսն ալ Սամաթիոյ Ադապեան վարժարանի նուիրած է, ինչպէս Ակլասի և Լօրենի որը մանկանց ևս նուէրներ առատաձեռնած է։

Զմառանամք յիշել՝ որ Պ. Տէր Մարգարեանց ի Փարիզ լաւ յարաբերութիւն ունեցեր է քաղաքական մեծամեծ պաշտօնատարաց հետ, շատ անգամ նախարարաց սեղանակից եղած և գանոնք իւր բնակարանը ընդունած է. վերջին օրերս մեծ հացկերոյթ տուեր է, ուր հրաւիրեր է և ներկայ գտնուեր են Գաղղիոյ Կառավարութեան մեծամեծ պաշտօնեայք և գիտնական անձինք, և քանի քանի անգամ Հայաստանի յառաջադիմութեան համար բաժակներ առաջարկուեր են։

*
* *

Ամենապատիւ Խրիմեանի սքանչելագործութեանց ասպարէզը օր աւուր կը զերազանցէ, ու կարծես վերջին ժամանակներս բոլորովին աղդալեաս հրաշալիք կը գործէ։

Բաւական չեն եղած Ամենապատուութեանը բռնապետական ընթացից ցարդ արտադրած վնասները, գործած զեղծումները, եկեղեցականի մը անվայելուչ և նախատինք . . . կանքը, ինչպէս առջի նամակով գրեցի, վիճակները կորստաբեր յեղափոխութեանց հրաւիրել և ժողովուրդը յուզել և կռուեցնելը . . . . լսեցէք, ինչպէս Բարդուղիմէոս Եպիսկոպոսը 60 զինուորներով Պրուսայէն Պոլիս բերել տուաւ, նոյնպէս Վանայ Փոխ. Առաջնորդ Պօղոս վարդապետն ալ՝ Տէրութեան ուշքին կասկածելի . . . ներկայացոյց, և բաւական չհամարելով Տէրութեան թնդանօթաձիգ զօրքերով Պայազիտի մօտ Երեքխորանեան Վանքը աքսորել տալը ամենայն խստատակութեամբ, նոյնպիսի անարգանօք և հարիւր քսան զօրքերով այժմ ալ ի Կարին բերել տուած է կրսեն։

Ո՞վ անխիղճ զրպարտութեան և բռնապետական վարմանց։ — Ո՞վ է Տէրութեան թշնամին և անհաւատարիմը, և ո՞վ փոխարէն զոհ կը տարուի, և ո՞վ է ընել տուողը, որք գուցէ քիչ ժամանակէն յայտնուին։

Կամ՝ հեռագիրը իրաւ ուշ հասաւ, և կամ Եղեսեան Եպիսկոպոսը վարպետ փրդաւ, և նա զինուորներով չփոխաւորուեցաւ Մարսուանէն աքսորուելու, և ի Պոլիս շունչն առաւ . . . . Ցեսնենք ի՞նչ կըլլայ հետևանքը։

*
* *

Հոս խելահաս և ողջամիտ անձինք կրթախանձեն Ամենա. Խրիմեանը՝ Վարագայ և Գլակայ Վանօրէից, և Ազգային պարտուց համար հաւաքեալ դրամոց հաշիւը տալ, բայց նա դեռ հաշիւ տալու միտք չունի։

Առաջնոյն տեսակը Քրտերը յափշտակեր են, երկրորդը Արծիւը կերեր է. երրորդն ալ Իւսկիւտարէն Պոլիս անցած ժամանակ ծովն է ինկեր։ Նա ալ մենք ալ ազատուեցանք. ամեն տարի բարով հասնինք։

Կարելի է ի վերին Երուսաղէմ տալ այս հաշիւները . . . եթէ յաղթահարուի — Եթէ միայն դրամականն լինի, շատ հեշտ է . . . . ։

*
* *

Եգիպտոսէն նորէն ձայներ հասան։

Աղեքսանդրիոյ մերազնեայք յուզուած են, և բուն պատճառները ցարդ գաղտնի մնացին։

Ոմանք կարևորութիւն չեն տար այս խնդրոյս, բայց Խատն Ժողովը առայժմ որոշեր է գրել Եգիպտոսի Առաջնորդ Գեր. Մեսրոպ Ս. Եպիսկոպոսին՝ որ փութայ Աղեքսանդրիա իջնելու և անձամբ խաղաղութիւնը հաստատելու հոգ տանել, դպրոցը վերստին բանալ՝ ինչպէս Գահիրէինն ալ։

Կըսրեմ՝ ի ժամանակին։

*
* *

Հռովմ. ազատ ազգայինք հետզհետէ կը յաջողին Հասունեանց ձեռքերէն առնել ինչպէս Լիբանանու Զմմարայ վանքը, նոյնպէս և այլ քաղաքաց մէջ և հոս ազգ. կրօնական և այլ բարեգործական հաստատութիւնները։

Սոքա կը ջանան սահմանադրական կառավարութիւն ունենալ, և շատ ճիգեր կը թափեն։

*
* *

Մալաթիան շատ յուզեալ է և զՍիս չճանչնար հիմա։

Ցեսնենք սորա վերջը ո՛ւր կերթայ։

*
* *

Ամսոյս 6ին (Հոկտ.) Հայաստանեայց Եկեղեցւոյ բանիբուն, գիտնական և կրօնասէր պաշտօնեան՝ Գեր. Գէորգ Արքեպիսկոպոս՝ Արմաշու վանից Վանահայրը առ Աստուած փոխեցաւ, և ի յաջորդ աւուրն մարմինը ամփոփեցաւ ի շիրիմ։

Արժանայիշատակ Գէորգ Արքեպիսկոպոսի տարաժամ վախճան պէտք է ցաւալի կորուստ համարուի Հայոց Եկեղեցւոյն համար, բայց Հանգուցեալոյն գործքեր՝ Արմաշու վանուց հոյակապ տաճարին շինութիւնը աւարտելը և քանի մի ամիս յառաջ թէ և գաւառաբար անձամբ՝ բայց և այնպէս ի կենդանութեանն օծելը, յիշեալ վանուց մէջ տպարան հաստատել և ծաղկեցնելը, ժառանգ. Ուսումնարանը բազմարդիւն հանդիսացնելը, Ցոյս ամսագիր հրատարակելը, — որ առժամանակեայ դադարած էր և յառաջիկայ տարւոյս սկիզբէն պիտի հրատարակուէր. — և տանէն ուսումնական՝ բարեբարոյ և ընտիր աշակերտներ հասուցանել և ի վարդապետ ձեռնադրելը, — թող այլ և այլ բարեկարգութիւնքը, — արդարև մեծ մխիթարութիւններ են մեր սրտի, և նորա անմահ անուան և յիշատակին յաւիտենական սքանչներ, որք ալեաց բարի և նախանձելի օրինակներ պէտք են ըլլալ։

Հանգուցեալը Հայաստանեայց Եկեղեցւոյ կրօնից և սուրբ աւանդութեանց նախանձախնդիր, պաշտպան, պարկեշտ, բարեբարոյ, հեանդուն և խոհեմ անձ էր, և վերջին Սսական անցից սկիզբէն ցարդ՝ ուղղակի և անուղղակի միջոցք անյաղթելի ախոյեան հանդիսացած էր գլխա-

տորապէս Պօլսոյ Օրֆէր լրագրոյ միջոցաւ ընդդէմ հակառակորդաց։

Յիշատակն արդարոց և արժանաւորաց օրհնութեամբ եղիցի։

Խ. Ն. Հայի. . . .

1872 Հոկտ. 10, ի Սմիւռնիա։

ԹԱԴԷՈՍ Ս. ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Գեր. Թադէոս Եպիսկոպոս Զիւնական Էխայլխոյ Փոխ.—Առաջնորդ կարգեցաւ։

Նորին Գերապատուութեան ուսումնասէր և շքջանկատ յատկութիւնք գրականն կարող են լինել մեր Էխայլխաբնակ սիրելի Ազգայնոց բարենպատակ ակնկալութեանց և Ազգօգուտ ջանից, և վայելել յաւէտ սէր՝ միաբանութիւն և խաղաղութիւնի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ և ի յառաջադիմութիւն ուսումնարանաց։

Նորին Գերապատուութիւն այսօր (31 Հոկտ.) մեկնեցաւ երթալ յիւր Վիճակն։

ՊԱՐՏՕՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Յայտնի է որ Երեւանայ Բրազդան (Զանգի) գետ բաժանվող "Դալմա" անուանեալ առուն՝ Էջմիածնայ Վանքի սեպհականութիւնն է և թէ այն առուի անխնամ մնալոյ պատճառաւ՝ բաւական տարածութեամբ երկիր ապարդիւն մընացած է երկար ժամանակէ հետէ։

Վեհափառ Կաթողիկոսն ամենայն Հայոց՝ կամենալով յիշեալ Էջմիածնայ սեպհականութիւնն արդիւնաւորել, սորանից մի քանի տարի առաջ աշխատեցաւ նոյն առուի ջուրն առատօրէն և անխափան Երեւանայ Զանգի գետ մինչև Վաղարշապատ բերել, բայց այն աշխատութիւններն այլ և այլ մասնական պատճառներով գոհացուցիչ արդիւնք մի չկարենալով արտադրել՝ այս անգամ արքունի Ն՛արտարապետի (Ingénieur) ձեռօք մանրամասն հետազօտութիւններ կատարել և առուի վերանորոգութեան համար մի նոր ծրագիր (Plan) գծագրել տուաւ։

Յիշեալ արքունի Ն՛արտարապետի մատուցած հաշիւներն՝ ցոյց կուտան, որ առուի երկարութիւնը պիտի լինի ի Զանգի գետ ցՎաղարշապատ 22 վերստի չափ, և նորա վերանորոգութեան ծախքը մօտ 20000 բուբլի արծաթոյ,—բայց որովհետև Էջմիածնայ Վանքը չէ կարող այս միջոցիս այս ծախքն ընել, ուստի Նորին Վեհափառութիւնն համաձայն խորհրդոյ Սինոդի անդամոց որոշեց՝ որ Դալմայի շինութիւնը հրապարակական աճրդախօսութեամբ յանձնուի նմին կամ նրանց, որք կյօժարին յանձն առնուլ նորա շինութիւնը իւրեանց ծախիւք յիշեալ արքունի Ն՛արտարապետի գծագրած ծրագրի համեմատ և ստանալ իւրեանց ծախուց փոխարէն որոշեալ մի ժամանակի համար Դալմայի առոգած հողոց օգուտը։

Աճրդախօսութիւնը պիտի որոշէ ժամանակի որքանութիւն և ով որ պակաս ժամանակով վերցնէ, նորան պիտի յանձնուի թէ առուի շինութիւնը և թէ ոռոգեալ հողոց արդիւնքը։

Ոռոգելի Աթոռոյս սեպհական հողերու ընդարձակութիւնը որ հաղար դեսեատինի չափ և խիստ արգասաւոր է, ջրոյ պակասութեան պատճառաւ մինչև հիմա վարուցանէ զուրկ մնացած է։ Տարակոյս չկայ, որ առուն շինուելով՝ երբ սկսի ջուրն անպակաս լինել, յիշեալ հողերը պիտի մշակուին արդիւնաւորապէս և կապալառուն պիտի ստանայ մեծամեծ օգուտներ։

Ուստի Էջմիածնայ Վանուց կալուածական Տեսչութիւնը ներկայ ծանուցմամբ կհրաւիրէ՝ ոք որ կփափաքին ձեռնարկել Դալմայի շինութեան՝ ներկայանալ հանդերձ օրինաւոր գրականօք ի Ս. Էջմիածին, ուր պիտի սկսին աճրդախօսութիւնք ի 20 էն առաջիկայ Նոյեմբերի՝ ցՅ10-ն Դեկտեմբեր ամսոյ։

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։